

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Լարիսա Ալավերդյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածն իրավունք է վերապահում յուրաքանչյուր անձի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը: Մինչդեռ առաջարկվող նախագծերի փաթեթով սահմանափակվում են սեփականատիրոջ սահմանադրական իրավունքները՝ պարտադրելով նրան բնակարանում բնակվող այլ անձանց հետ կիսել իր սեփականությունը տնօրինելու, տիրապետելու կամ օգտագործելու իրավունքը, ինչը նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության սահմանափակող նորմեր պարունակող 31-րդ և 43-րդ հոդվածներով:

Նախագծերի փաթեթը հակասում է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի՝ փոխված 11-րդ արձանագրության 1-ին հոդվածի պահանջներին, որի համաձայն յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացա-

ռության մեջ ի շահ հանրության, այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքներով և միջազգային իրավունքի սկզբունքներով:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բնակարանի օգտագործման իրավունքը գույքային իրավունք է և այն չի կորուսում, եթե փոխվում են բնակարանի սեփականատերերը: Այլ անձանց, առանց սեփականատիրոջ համաձայնության, գույքային իրավունքներ վերապահելով՝ սեփականատիրոջը զրկում ենք իր բնակարանից անարգել օգտվելու՝ կոնվենցիայով նախատեսված իրավունքից, քանի որ սեփականատերը զրկվում է առանց օգտագործման իրավունք ունեցողի համաձայնության տիրապետել, տնօրինել իր սեփականությունը:

Օրենքների նախագծերի փաթեթը չի բխում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 3-րդ և 437-րդ հոդվածների պահանջներից, որոնցով երաշխավորվում է պայմանագրի ազատության սկզբունքը: Մինչդեռ, առաջարկվող նախագծերի փաթեթով սեփականատիրոջը պարտադրվում է իր կամքին հակառակ կնքել պայմանագիր:

Հարկ ենք համարում նշել, որ նախագծերի փաթեթով առաջարկվում է վերադառնալ խորհրդային համայնավարական հարաբերություններին, քանի որ միայն խորհրդային օրենսդրությունն էր սեփականատիրոջ նկատմամբ սահմանում նման սահմանափակումներ: Այդ մտեցումը նախատեսված էր Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի նախագծում, սակայն այն մերժվեց Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկումների արդյունքում: Ավելին, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը, հակասահմանադրական համարելով դատարանների կողմից կիրառվող խորհրդային պրակտիկան, 2005 թվականի հոկտեմբերի 4-ի ՀՕ-188-Ն օրենքով հստակեցրեց սեփականատիրոջ սահմանադրական իրավունքը:

Միաժամանակ հայտնում ենք, որ իր ծնողների հետ բնակվելու երեխայի իրավունքը նախատեսված է «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, որտեղ հստակ սահմանված է, որ բնակելի տարածության վարձակալի կամ սեփականատիրոջ ընտանիքի անդամ հանդիսացող երեխան ունի այդ վարձակալի կամ սեփականատիրոջ զբաղեցրած բնակելի տարածությունում ապրելու իրավունք՝ անկախ իր բնակության վայրից: Այս իրավունքն ավելի մեծ երաշխիքներ է տալիս երեխային՝ չխախտելով ծնողի սեփականության իրավունքը:

2. Ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլխի պահանջներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում քննարկելիս՝ հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-420-27.12.2008-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին**

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի /5-ը մայիսի 1998թ. հետագա փոփոխություններով եւ լրացումներով/ 225-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը վերջակետից առաջ ավելացնել ստորակետ եւ ապա հետեւյալ բառակապակցությունը «որոնք բնակելի տարածության օգտագործման իրավունք ձեռք են բերում, եթե սեփականատերը չի պահանջել եւ չի կնքել հետագայում այդ իրավունքն անհատույց դադարեցնելու պայմանով բնակելի տարածության օգտագործման պայմանագիր»:
2. 225-րդ հոդվածի 2-րդ կետը լրացնել 2-րդ, 3-րդ եւ 4-րդ հետեւյալ պարբերություններով՝ «Այս սկզբունքից բացառություն են կազմում սեփականատիրոջ ընտանիքի անդամները /ամուսինը, երեխաները, ծնողները/: Բնակելի տարածության օգտագործման իրավունքը սեփականատիրոջ ընտանիքի անդամների համար ծագում է անկախ սեփականատիրոջ հետ պայմանագրի կնքումից եւ իրավունքի պետական գրանցումից: Սակայն ընտանիքում նոր չափահաս անդամ ավելանալիս սեփականատերն իրավունք ունի ընտանիքի նոր անդամից պահանջել կնքելու բնակելի տարածության անհատույց օգտագործման պայմանագիր, որով իրեն իրավունք կվերապահի նրա այդ իրավունքը միակողմանի անհատույց դադարեցնել ցանկացած ժամանակ: Եթե նման պայմանագիր է կնքվել, ապա այն տարածվում է նոր բնակեցված ընտանիքի անդամի հետ միաժամանակ բնակեցված կամ նրա բնակության ընթացքում ծնված երեխաների վրա՝ եթե պայմանագրով այլ բան չի նախատեսված:

Եթե ընտանիքի նոր բնակեցված անդամը ընտանիքի բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անդամի ամուսինն է, ապա բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող այդ անդամը մասնակցում է պայմանագրի կնքմանը որպես պայմանագրի 3-րդ կողմ:

Ընտանիքի նոր բնակեցված անդամի հետ կնքված պայմանագիրը ենթակա է նոտարական կարգով հաստատման եւ պետական գրանցման»:

3. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից եւ տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքի ընդունումը ծագած հարաբերությունների վրա:

Նախագիծ  
Պ-420՝-27.12.2008-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

«Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի / ՀՕ-188, ընդունված 04-ը հոկտեմբերի 2005թ./ 32-րդ հոդվածում կատարել հետեւյալ լրացումը.

**Հոդված 1.** 32-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ պարբերությունը լրացնել հետեւյալ բառակապակցությամբ՝ վերջակետի փոխարեն դնել բուժ եւ ապա ավելացնել. «ինչպես նաեւ ընտանիքի այն անդամները, որոնց հետ սեփականատերը նրանց բնակեցնելիս չի կնքել բնակելի տարածության օգտագործման իրավունքը հետագայում անհատույց դադարեցնելու մասին պայմանագիր»:

32-րդ հոդվածի 3-րդ կետի վերջակետի փոխարեն դնել բուժ եւ ավելացնել. «ինչպես նաեւ օրենքի ուժով բնակելի տարածության օգտագործման իրավունք ստացած ընտանիքի անդամների վրա»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Նախագիծ  
Պ-420՝-27.12.2008-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ  
կատարելու մասին**

Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի /ՀՕ-123-Ն, ընդ. 09-ը նոյեմբերի 2004թ./ 47-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունը եւ լրացումը.

**Հոդված 1.** Օրենսգրքի 47-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«4. Երեխան սեփականության իրավունք չունի ծնողների գույքի նկատմամբ, իսկ ծնողները սեփականության իրավունք չունեն երեխայի գույքի նկատմամբ: Համատեղ ապրող երեխաներն ու ծնողները բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեն միմյանց սեփականությունը հանդիսացող բնակելի տարածության նկատմամբ, նրանց այդ իրավունքը պահպանվում է նաեւ երեխայի չափահաս դառնալուց հետո: Համատեղ ապրող ծնողներն ու երեխաները մեկը մյուսի այլ գույքը կարող են տիրապետել եւ օգտագործել փոխադարձ համաձայնությամբ»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Նախագիծ  
Պ-420Յ-27.12.2008-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ  
կատարելու մասին**

Հայաստանի Հանրապետության «Երեխայի իրավունքների մասին» օրենքի /ընդունված 29-ը մայիսի 1996թ., ՀՕ-59/ 16-րդ հոդվածում կատարել հետեւյալ փոփոխությունը.

**Հոդված 1.** 16-րդ հոդվածի 1-ին պարբերության վերջակետի փոխարեն դնել ստորակետ եւ ապա լրացնել` «սեփականատիրոջ բնակելի տարածության նկատմամբ նաեւ ձեռք է բերում բնակելի տարածության օգտագործման իրավունք, որը պահպանվում է նաեւ երեխայի չափահաս դառնալուց հետո»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

**Օրենքի ընդունման անհրաժեշտության**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի սկզբնական խմբագրությամբ նույնպես ամրագրված է եղել բնակտարածության օգտագործման իրավունքի վերաբերյալ սեփականատիրոջ հետ նոտարական կարգով կնքված գրավոր համաձայնության եւ այդ իրավունքի պետական գրանցման պարտադիր լինելու սկզբունքը: Այդ իրավունքի պետական գրանցում է համարվել անձի մշտական հաշվառումը /գրանցումը/ տվյալ բնակարանի հասցեով:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» **04.10.05** թ. ընդունված /ՀՕ-188-ն/ օրենքի 11-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել նաեւ Օրենսգրքի 225-րդ հոդվածը:

Հոդվածի նոր խմբագրությամբ հստակեցվել է բնակելի տարածության օգտագործման իրավունքի հասկացությունը, այդ իրավունքի դադարեցման դեպքում տրվող փոխհատուցման հաշվարկի կարգը:

Օրենքի 32-րդ «Անցումային դրույթներ» հոդվածի 2-րդ կետով սահմանվում է. «Եթե անձը մինչեւ 1999թ. հունվարի 1-ը սահմանված կարգով հաշվառված /գրանցված/ է եղել բնակելի տարածությունում եւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահը մշտապես կամ առավելապես բնակվել է այդ բնակարանում, ապա մինչեւ 2006թ. դեկտեմբերի 31-ը սեփականատիրոջ կողմից հայցադիմում ներկայացվելու դեպքում փոխհատուցումը կատարվում է սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված կարգով:

Եթե սեփականատիրոջ կողմից բնակության իրավունքը դադարեցնելու հայցադիմումը ներկայացնում է դատարան 2007թ. հունվարի 1-ից հետո, ապա սույն կետով սահմանված պաշտպանությունից օգտվում են միայն այն անձինք, որոնց բնակելի տարածության նկատմամբ օգտագործման իրավունքը գրանցված է սահմանված կարգով»:

Մա նշանակում է, որ սեփականատիրոջ ընտանիքի բոլոր այն անդամները, որոնք չեն հանդիսանում բնակարանի համասեփականատերեր, մինչեւ 2006թ. դեկտեմբերի 31-ը պարտավոր էին բնակարանի սեփականատիրոջ հետ կնքել բնակելի տարածության օգտագործման պայմանագիր, հակառակ դեպքում սեփականատերը ցանկացած ժամանակ կարող է նրանց վտարել առանց փոխհատուցման:

Դժվար է պատկերացնել, որ բնակարանի միակ սեփականատեր հանդիսացող հոր հետ բնակտարածության օգտագործման պայմանագիր կկնքեն նրա երեխաները կամ կինը: Նման անհրաժեշտություն ընտանիքի անդամները չեն տեսնում, քանի դեռ ընտանիքը հաշտ է, իսկ անհաշտություն առաջանալուց հետո, սեփականատերը բնականաբար կխուսափի նման պայմանագիր կնքելուց:

Ուշագրավ է նաեւ այն, որ Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածով սեփականատերը պարտավորեցված չէ կնքելու պայմանագիր բնակտարածության օգտագործման հավակնող որեւէ մեկի, այդ թվում նաեւ ընտանիքի անդամների հետ, ինչը պայմանագրի կնքումը դարձնում է անիրագործելի: Պետք է նկատի ունենալ, որ խոսքը ոչ միայն մինչեւ 1999 թվականը հաշվառում ունեցողների մասին է, այլ նաեւ դրանից հետո ծագած հարաբերություններում հայտնվածների:

Եթե անչափահաս երեխաներն ունեն ծնողների հետ ապրելու իրավունք եւ սեփականատերը չի կարող իր անչափահաս երեխային բնակարանից վտարելու պահանջ ներկայացնել, ապա

չափահաս երեխաներն այդ առումով դառնում են անպաշտպան, եթե ծնողը չափահաս երեխաների հետ չի կնքում բնակտարածության օգտագործման պայմանագիր:

Երեխայի բնակտարածության օգտագործման խնդիր է առաջանում նաև ծնողների ամուսնալուծման հետ կապված` բաժանվող եւ ընտանիքից հեռացող ծնողի խնամքին հանձնվող երեխայի համար, երբ հեռացող ամուսինը բնակտարածության օգտագործման իրավունք ձեռք չի բերել:

Ներկա դրությամբ շատ են կանայք, որոնք ամուսնալուծվելուց հետո իրենց երեխայի կամ երեխաների հետ մնացել են անապաստան, քանի որ **225**-րդ հոդվածով նախատեսվող պայմանները /պայմանագիր, իրավունքի պետական գրանցում/ բացակայում են: